Շարժական քվեատուփը տանող հանձնաժողովի անդամի գործառույթները
(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 66)

Ուշադրությո՛ւն

Շարժական քվեատուփի միջոցով քվեարկության ընթացակարգը սկսվում է քվեարկության օրվա ժամը 9-ից և ավարտվում է ժամը 19-ին:

- քվեարկության օրվա ժամը 9-ից հանձնաժողովի նախագահը պետք է Ձեզ փոխանցի.
  - ✓ շարժական քվեատուփը ցուցակը,
  - ✓ ընտրողների գրանցումն իրականացնողի ստորագրությամբ և գրանցումն իրականացնողի կնիքով վավերացված անհրաժեշտ քանակությամբ ընտրական քվեաթերթիկներ,
  - ✓ հատուկ ծրարներ,
  - ✓ զմռսակնքված շարժական քվեատուփը, որում զետեղված է ստուգողական թերթը:
- Ընտրողին մոտենալիս խնդրե՛ք նրան ներկայացնել.
  - ✓ Վրաստանի քաղաքացու ինքնությունը հավաստող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը,
  - ✓ հարկադրաբար վերաբնակեցված անձի՝ տարհանվածի, դեպքում՝ տարհանվածի վկայականը, Վրաստանի քաղաքացու ինքնությունը հավաստող վկայականի կամ Վրաստանի քաղաքացու անձնագրի հետ:
- Համեմատե՛ք ընտրողի անձնական համարը շարժական քվեատուփի ցուցակում ընդգրկված անձնական համարի հետ:
- Շարժականքվեատուփիցուցակումստորագրությամբվավերացրե՛ք ընտրական քվեաթերթիկ/քվեաթերթիկներ հատկացնելը:
- Խնդրե՛ք ընտրողին շարժական քվեատուփի ցուցակում իր ազգանվան երկայնքով ստորագրությամբ հավաստել ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները ստանալը:

- Ընտրողին փոխանցե՛ք, ընտրողների գրանցումն իրականացնողի ստորագրությամբ և գրանցումն իրականացնողի կնիքով վավերացված, ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները:
- Ընտրողի՛ կողմից քվեաթերթիկը՛ լրացնելուց հետո, նրան փոխանցե՛ք հատուկ ծրարը և ցուցո՛ւմ տվեք, որ նրա մեջ զետեղի ծալված ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները:
- Ընտրողին խնդրե՛ք ծրարը գցել շարժական ընտրական քվեատուփի մեջ:
- Քվեարկության ավարտից հետո շարժական քվեատուփի ճեղքն այնպես զմռսակնքե՛ք, որ անհնար լինի, առանց զմռսակնիքը վնասելու, այն բացել:
- Ոչ ուշ, քան քվեարկության՛ օրվա ժամը 20-ը շարժական ընտրական քվեատուփը վերադարձրե՛ք ընտրական տեղամաս:
- Քվեարկության շենք վերադառնալուց հետո, հանձնաժողովի քարտուղարին փոխանցե՛ք չօգտագործված ընտրական քվեաթերթիկները և հատուկ ծրարները: Սպասե՛ք հանձնաժողովի նախագահի հետագա ցուցումներին:

Ուշադրությո՛ւն

- Եթե խախտվել է շարժական քվեատուփի զմռսակնիքի ամբողջականությունը, այդ մասին անհապաղ տեղեկացրե՛ք հանձնաժողովի նախագահին: Կազմե՛ք համապատասխան արձանագրություն (նշե՛ք պատճառը) և ստորագրե՛ք Ձեզ ուղեկցող անձանց հետ մեկտեղ: Սպասե՛ք հանձնաժողովի նախագահի հետագա ցուցումներին:
- Շարժական քվեատուփի միջոցով քվեարկությանը մասնակցող ընտրողների հանդեպ չի կիրառվում նշմարման ընթացակարգ:
- «Ֆիզիկական վիճակի» պատճառով ընտրողի կողմից շարժական քվեատուփի միջոցով քվեարկության դեպքում, շարժական քվեատուփի ցուցակի «Ընտրողի ստորագրություն» սյունակում արեք՛ գրառում՝ «ֆիզիկական վիճակ» և հավաստե՛ք ստորագրությամբ:
- «Ֆիզիկական վիճակ» ունեցող ընտրողի (նաև այն ընտրողի, որն ինքնուրույն չի կարող լրացնել ընտրական քվեաթերթիկը) փոխարեն, նրա ներկայությամբ, ընտրական քվեաթերթիկը լրացնում, հատուկ ծրարի մեջ է զետեղում և ծրարը շարժական քվեատուփի մեջ գցում նրա կողմից ընտրված անձը (բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամի, թեկնածուի, ընտրական սուբյեկտի ներկայացուցչի և դիտորդի):